ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԻՐՔԵՐՈՒՄ

Հունիսի 20-ին, ուրբաթ օրը, ժամը 15-ին, Երևանում, Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերության սրահում, տեղի ունեցավ Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի ընդլայնված նիստը, որին մասնակցում էին մշակույթի, գիտության, արվեստի ու մայրաքաղաքի հասարակայնության ներկայացուցիչներ:

Մայր Աթոռի կողմից նիստին մասնակցում էին հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը և դիվանապետ Հայկ Առաքելյանը:

Ժողովում քննարկվեց վերջերս բանվորական կուսակցությունների Մոսկվայի միջազգային խորհրդակցության ընդունած «Խաղաղության պաշտպանության կոչը»՝ ուղղված բովանդակ աշխարհի աշխատավորությանը, կրոնական համայնքների և տարբեր դավանությանց տեր մարդկանց, մտավորականներին, գիտության, արվեստի գործիչներին, երկրագնդի բոլոր մայրերին և հայրերին, երիտասարդությանն ու ուսանողությանը, բարի կամքի տեր բոլոր մարդկանց, իրենց սրտագին ջանքերը, աշխատանքները միացնելու, էլ ավելի ակտիվորեն պայքարելու համար հանուն մնայուն և երկարատև խաղաղության՝ ընդդեմ ժողովուրդներին ստրկացնել փորձելու նոր ուժերի, ընդդեմ միջուկային պատերազմի, որը բացահայտորեն վտանգի տակ է դնում ամբողջ հողագնդի ողջ մարդկության ճակատագիրը և քաղաքակրթության ապագան:

Ժողովը ներածական բովանդակալից ճառով բացեց Խաղաղության պաշտպանության հանրապետական կոմիտեի նախագահության անդամ, բանասիրական գիտությունների թեկնածու, գրականագետ Կ. Դալլաքյանը:

Այնուհետև ելույթ ունեցան Ասիայի և Աֆրիկայի երկրների հետ համերաշխության հանրապետական կոմիտեի պատասխանատու քարտուղար Հ. Հակոբյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ և Կիրովի անվան քիմիական կոմբինատի բանվոր Խ. Գրիգորյանը, տնտեսագիտական գիտությունների թեկնածու Ա. Եղիազարյանը, հանրապետության սոցիալական ապահովության մինիստրի տեղակալ Ա. Նալբանդյանը:

Ժողովը սրտագին մթնոլորտում, միահամուռ և վճռական կերպով հավանություն տվեց ներկայացված խաղաղության կոչին:

Ժողովում որոշվեց նաև, հանուն հանրապետության ողջ հասարակայնության, ողջույնի հեռագիր ուղարկել Բեռլին՝ Խաղաղության համաշխարհային համաժողովի հոբելյանական կոնգրեսին, որը գումարվում է հունիսի 21—24 օրերին Արևելյան Բեռլինում, և որին մասնակցում է նաև Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը:

«Աշխարհի այսօրվա իրադրությունը,— ասված է հեռագրում,—հրամայաբար պահանջում է խաղաղ համագործակցության մթնոլորտ, ժողովուրդների միջև փոխըմբռնում և բարեկամության հաստատում, և բարի կամքի տեր բոլոր մարդկանց ջանքերի մեծ լարում»՝ հանուն խաղաղության մղված պայքարում:

Խաղաղությունը կհաղթի պատերազմին:

Պատերազմը անհամատեղելի է մարդու կոչումին և մեր քրիստոնեական խղճի և հավատքի հետ:

Խաղաղությունը Աստծու կամքն է և պատգամը:

Հայ ժողովուրդը, որն ամեն օր ջերմորեն աղոթում է «վասն խաղաղութեան ամենայն աշխարհի», և որը պատմական անցյալում լիապես ճաշակել է պատերազմի դառնությունն ու ողբերգությունը, խաղաղություն է պահանջում և պայքարում, աշխատում, աղոթում է երկրագնդի վրա մնայուն ու քրիստոսավանդ խաղաղության հաստատման և հաղթանակի համար:

Անմահ է ժողովուրդը, և արդար է նրա՝ հանուն խաղաղության մղած սուրբ գործը: